սկսում է հոսել ուղիղ արեւելք։ Բալախոռի խառնունքի մօտ ձորոխը ունի 5800′ բարձրութիւն, մեծ է ջրով եւ գնում է ահեղագոչ սահանքով։ Բալախոռի վտակը ոռոգում է ձորոխի երրորդ զաւառը։

4. Բալախոռի խառնունքից 6–7 կիլոմետր ցած, Զինջուլ եւ Մայք առուակների խառնունքից յետոյ, սկսւում է Սպերի (Իսպիրի) երկար հովիտը, որ 40 կիլոմետր երկարութիւն ունի եւ տեղ-տեղ լեռների կատարները իրարից 5–10 կիլոմետր հեռաւորութիւն ունին եւ վերջանում է այս հովիտը աջից եւ ձախից ընդունած Հնուտ կրկին առուակներով։ Սպերի հովիտը կազմում է ձորոխի չորրորդ զաւառը։

5. Կրկին Հնուտներից սկսւում է Կիսկիմի (Կիշկա-Բոխա) հովիտը, ուր ձորոխը սկսում է թեքուել դէպի արեւելահիւսիս եւ ապա հիւսիսարեւելք, մինչեւ Ամլէթ եւ Ախլաթ գեղերը, ուր Պարխալը խառնւում է ձորոխին։ Կիսկիմն էլ Սպերի նման ձորոխի բարերեր եւ ընդարձակ հովիտն է, ուր դաշտերն աւելի ընդարձակ են եւ աւելի մեծ յարմարութիւն ունին երկրամշակութեան։ Կիսկիմը ձորոխի հինգերորդ զաւառն է կազմում։

6. Ապա Պալխար կամ Պարխալ վտակը իջնում է Քաչկար լ-ից, ոռոգում է Պարխալի եւ Բահլի հովիտները 36 կիլոմետր երկարութեամբ, ձախից խառնւում է ձո-